ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2572-Ա « 18 » մայիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի Հ.2347-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 37-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով լ/ա Զորի Սարգսյանի 14.05.2026թ. հ.Դ-49233-26 դիմումը.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2015 թվականի հուլիսի 30-ի «Անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու և Երևանի քաղաքապետի 2014թ. ապրիլի 10-ի հ.1334-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հ.2347-Ա որոշման հավելվածի 5-րդ և 6-րդ կետերը:

3. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

18.05.2026

X

Подписано: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246

Հավելված
Երևանի քաղաքապետի
18.05.2026թ.
հ. 2572-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Սերյոժա Խաչատրյան /լիազորված անձ/ Լևոն Ավետիսյան	Հաղթանակ թաղամաս, հ.40-7	հողամաս	Լևոն Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող, Հաղթանակ թաղամասի հ.40-7 հասցեում գտնվող հողամասին /վկ. հ.16012026-01-0265 և Երևանի քաղաքապետի 07.05.2026թ. հ.2354-Ա որոշում/ տրամադրել հասցե՝ Հաղթանակ թաղամաս, 2-րդ փողոց, 9-րդ նրբանցք, հ.22/6	01073HD4WKJW	
2	Մարինե Խաչատրյան	Հաղթանակ թաղամաս, հ.52-12ա, 52-12	հողամաս	Մարինե Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող, Հաղթանակ թաղամասի հ.52-12ա, 52-12 հասցեում գտնվող հողամասին /վկ. հ.05122025-01-0386 և Երևանի քաղաքապետի 07.05.2026թ. հ.2355-Ա որոշում/ տրա-մադրել հասցե՝ Վ. Պետրոսյան փողոց, 2-րդ նրբանցք, հ.16	01073FG3DX9U	
3	Զորիկ Սարգսյան /լիազորված անձ/ «ԲԱԲԵ» ԲԲԸ	Թբիլիսյան խճուղի, հ.35ա	արտադրական մասնաշենք	«ԲԱԲԵ» ԲԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Թբիլիսյան խճուղու հ.35ա հասցեում գտնվող արտադրական մասնաշենքին /սեփ. վկ. հ.2485667/ տրամադրել հասցե՝ Թբիլիսյան խճուղի, հ.35/27	01033AXHPT2E	
4	Դավիթ Մկրտչյան /լիազորված անձ/ Գայանե Հարությունյան	Հաղթանակ թաղամաս, 2-րդ փողոց, 9-րդ նրբանցք, հ.30/1	հողամաս	Գայանե Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող, Հաղթանակ թաղամասի 2-րդ փողոցի 9-րդ նրբանցքի հ.30/1 հասցեում գտնվող հողամասի /վկ. հ.03042026-01-0199/ բաժանման հատակագծով առանձ-նացվող 175.2քմ մակերեսով մաս 1-ին տրամադրել հասցե՝ Հաղթանակ թաղամաս, 2-րդ փողոց, 9-րդ նրբանցք, հ.30/2	01073AMAVPA2	
5	Կարեն Մկրտչյան	Բագրատունյաց փողոց, հ.16 շենքի հ.149	տարածք	Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 16.12.2025թ. գործ հ. ԵԴ2/1788/02/25 վճռով, Կարեն Մկրտչյանի սեփականության իրավունքը ճանաչված Բագրատունյաց փողոցի հ.16 շենքի հ.149 հասցեին կից գտնվող տարածքին տրամադրել հասցե՝ Բագրատունյաց փողոց, հ.16 շենք, հ.149/1	01113D5QUTGX	
6	Սերյոժա Խաչատրյան /լիազորված անձ/ Արսեն Պետրոսյան /սեփականատեր/	Մալաթիա-Սեբաստիա	հողամաս	Արսեն Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող, Մալաթիա-Սեբաստիայում գտնվող հողամասին /վկ. հ.04122025-01-0283, Երևանի քաղաքապետի 07.05.2026թ. հ.2348-Ա որոշում/ տրամադրել հասցե՝ Հաղթանակ թաղամաս, 2-րդ փողոց, 9-րդ նրբանցք, հ.22/3	010739BSKQVT	

7	Գայանե Ասոյան /լիազորված անձ/ Հրաչ Ասոյան /սեփականատեր/	Մաշտոցի պողոտա, հ.48 շենք	տարածք	Հրաչ Ասոյանին սեփականության իրավունքով պատկանող, Մաշտոցի պողոտայի հ.48 շենքի տարածքին /սեփ. վկ. հ.1487701/ տրամադրել հասցե՝ Մաշտոցի պողոտա, հ.48 շենք, հ.80/1	01063UHXEUHP	
8	Անահիտ Ավետիքյան	Նար-Դոսի փողոց, հ.34 շենք	նկուղ	Անահիտ Ավետիքյանին սեփականության իրավունքով պատկանող, Նար-Դոսի փողոցի հ.34 շենքի նկուղին /սեփ.վկ. հ.2089240/ տրամադրել հասցե՝ Նար-Դոսի փողոց, հ.34 շենք, հ.19	0106384T8X8U	
9	Սերոբ և Տաթևիկ Զեյնալյաններ	Ծարավ Աղբյուրի փողոց, հ.134/4 շենք, հ.29	բնակարան	Սերոբ և Տաթևիկ Զեյնալյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, Ծարավ Աղբյուրի փողոցի հ.134/4 շենքի հ.29 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.28042026-01-0010, ընդ. բաժ. 4.5քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 45.3քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Ծարավ Աղբյուրի փողոց, հ.134/4 շենք, բն.29/1	01023EFGVMPQ	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

18.05.2026

X _____

Подписано: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246